ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 սեպտեմբերի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

109
(3318)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓՈՐՁՈՒՄ Է «ԽՄԲԱԳՐԵԼ» ԻՐ ԽՈՍՔԵՐԸ

Ազգային ժողովի նախկին նախագահ Ալեն Սիմոնյանը Բիշքեկ մեկնելուց առաջ, կարծես, փորձում էր վերախմբագրել Ռուսաստանի վերաբերյալ իր նախկին խոսքերի շուրջ ձեւավորված քաղաքական պատկերը:

Պատահական չէ, որ հենց այս ժամանակահատվածում Նիկոլ Փաշինյանի ընտանեկան լրատվամիջոցը հրապարակեց Ալեն Սիմոնյանի եւ «Ժողովուրդ» օրաթերթի միջեւ դատական վեճի մասին լուր՝ շեշտադրելով, որ դատարանը պարտավորեցրել է լրատվամիջոցին հերքել Սիմոնյանին վերագրված՝ Ռուսաստանի կործանման վերաբերյալ հայտարարությունները: (Armtimes.com)

Սակայն հրապարակված դատական ակտի հետեւում մի ամբողջ պատմություն կա, որի մասին իշխանական լրատվամիջոցը լռում է:

Ի՞նչ էր գրել «Ժողովուրդ»-ը: 2025 թվականի հունվարի 28-ին «Ժողովուրդ» օրաթերթը հրապարակել էր «ՏԵՍԱՆՅՈՒԹ. Ալեն Սիմոնյանը սպասում է Ռուսաստանի կործանմանը՝ նշելով, որ դա բացելու է նոր հեռանկարներ. մանրամասներ փակ նիստից» վերտառությամբ հոդվածը: Խոսքը հունվարի 23-ին Ալեն Սիմոնյանի եւ Հյուսիսային Եվրոպա-Բալթյան ութնյակի՝ Nordic-Baltic Eight ձեւաչափի խորհրդարանների ղեկավարների ու ներկայացուցիչների հետ հանդիպման մասին էր: «Ժողովուրդ»-ի աղբյուրը՝ հանդիպմանը մասնակցած բալթյան երկրներից մեկի խորհրդարանական ներկայացուցիչը, հայտնել էր, որ փակ հանդիպման ընթացքում Սիմոնյանը խիստ հակառուսական գնահատականներ է հնչեցրել: Մեր հրապարակման համաձայն՝ խոսք էր գնացել Ռուսաստանի պարտության ու հնարավոր կործանման եւ դրա հետեւանքով Հայաստանի ու բալթյան երկրների համար նոր հեռանկարների մասին:

Դեռ հրապարակումից առաջ «Ժողովուրդ»-ը դիմել էր նաեւ Ալեն Սիմոնյանի խոսնակին՝ ներկայացնելով տեղեկությունը եւ հնարավորություն տալով արձագանքել: Պատասխանը եղել էր, որ ԱԺ նախագահը նման հայտարարություններ չի արել: Այսինքն՝ նյութում ներկայացված էր նաեւ Սիմոնյանի կողմի պաշտոնական դիրքորոշումը: Հրապարակումից հետո Ալեն Սիմոնյանը պահանջեց հերքում, ապա դիմեց դատարան:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Առողջապահության համակարգում կադրային խառնաշփոթը չի ավարտվում: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանությունը շարունակում է առողջապահության ոլորտում նոր կադրային լուծումների փնտրտուքը, իսկ վերջին նշանակումները դեռեւս չեն բացառվում որպես ժամանակավոր որոշումներ: Իշխանական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ առողջապահության փոխնախարարի պաշտոնից ազատված Լեւոն Հակոբյանը ներկայումս փորձում է որեւէ կերպ պահպանել իր տեղը համակարգում: Մեր տեղեկություններով՝ նա պաշտոնի փնտրտուքի մեջ է եւ տարբեր մակարդակներում փորձում է հասկանալ՝ առողջապահության համակարգում ինչ պաշտոն կարող է զբաղեցնել: Հակոբյանի պաշտոնանկության հարցը, ըստ իշխանական շրջանակներում շրջանառվող տեղեկությունների, քննարկվել է դեռեւս որոշ ժամանակ: Պատճառների թվում նշվում են նրա աշխատանքային հարաբերությունները եւ տարբեր բժշկական հաստատությունների ղեկավարների հետ ունեցած տարաձայնությունները: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ նրա կոնֆլիկտային գործելաոճը պարբերաբար դժգոհությունների եւ ներքին քննարկումների առիթ է դարձել:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանությունը ի սկզբանե որոշել էր Ազգային ժողովի տարածքային կառավարման եւ շրջակա միջավայրի հարցերի մշտական հանձնաժողովի ղեկավարի պաշտոնը չզիջել ընդդիմությանը: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ այս հարցում իշխանության համար կարեւոր գործոն է եղել հանձնաժողովի գործող նախագահ Հայկ Ղալումյանը, որը Նիկոլ Փաշինյանի հետ քավորսանիկական կապեր ունի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանական շրջանակներում քննարկումների ժամանակ տարբերակներից մեկը եղել է այն, որ հանձնաժողովի ղեկավարումը շարունակի մնալ իշխանության ձեռքում, իսկ Ղալումյանը հանձնաժողովում պահպանի առանցքային դերակատարություն՝ այդ թվում փոխնախագահի կարգավիճակով: Հատկանշական է, որ նախորդ շաբաթ «Ուժեղ Հայաստան» դաշինքը հանձնաժողովի նախագահի պաշտոնում երկու թեկնածու էր առաջադրել՝ նախ Դավիթ Ղազինյանին, ապա՝ Իրինա Յոլյանին: Սակայն երկու թեկնածուներն էլ չընտրվեցին: Իշխանական պատգամավորները թեկնածուներին չընտրելու պատճառը ներկայացրին որպես սկզբունքային մոտեցում: Նրանց պնդմամբ՝ թե՛ Ղազինյանի, թե՛ Յոլյանի նկատմամբ առկա են քրեական վարույթներ, եւ իշխանությունը նման իրավիճակում գտնվող թեկնածուների օգտին չի պատրաստվում քվեարկել:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Արցախի հանրապետության իրավապահ համակարգում աշխատած եւ ներկայումս ՀՀ իրավապահ համակարգում աշխատանքի անցած քննիչներն ու դատախազները փաստի առաջ են կանգնել: Բանն այն է, որ դատախազությունում եւ քննչական կոմիտեում 20 տարի եւ ավել ժամկետով դատախազ եւ քննիչ աշխատած քաղաքացիները, որոնք 2023 թվականի տարհանումից հետո աշխատանքի են անցել ՀՀ քննչական կոմիտեում կամ դատախազությունում, այդ անձանց աշխատանքային ստաժը հաշվի առնելով են ընդունել աշխատանքի եւ պաշտոնավարում են: Սակայն այս օրերին նրանք հայտնվել են անորոշության մեջ: Բանն այն է, որ քննիչներն ու դատախազները չգիտեն՝ 20 եւ ավելի տարի ժամկետով աշխատելու դեպքում թոշակ ստանալու իրավունք ունեն, թե ոչ, Արցախում դատախազ, քննիչ աշխատած տարիների ստաժը հաշվարկվելու է որպես մասնագիտական ստաժ, թե ոչ: Արձանագրենք, որ «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում նշված է, որ մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառվում են Հայաստանի Հանրապետությունում դատախազի, քննիչի, հատուկ քննչական ծառայության ծառայողի, ԽՍՀՄ դատախազության համակարգում դատախազի եւ քննիչի պաշտոնում աշխատած ժամանակահատվածը, Հայաստանի Հանրապետությունում եւ ԽՍՀՄ-ում դատավորի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը, ինչպես նաեւ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամանակահատվածը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԳԱԼԸ ՀԵՇՏ ՉԷ

ArmLur.am-ի զրուցակիցը արժանապատիվ տեր Թովմաս քահանա Կարապետյանն է (սկիզբը՝ նախորդ համարում):

- Անդրադառնանք պսակադրությանը: Ի՞նչ խորհուրդ ունի այն, եւ ի՞նչ պետք է իմանա զույգը, երբ գալիս է եկեղեցի պսակադրվելու: Որքանո՞վ է կարեւոր եկեղեցական պսակադրությունը, երբ այսօր շատ երիտասարդներ նախընտրում են միայն քաղաքացիական ամուսնությունը:

- Պսակադրությունը մեր Եկեղեցու սրբազան խորհուրդներից մեկն է: Ինքը՝ «պսակ» բառը, թագի իմաստն ունի: Պսակադրության ժամանակ ամուսինները թագադրվում են եւ միմյանց առջեւ խոստանում հավատարիմ լինել: Այդ ուխտին հավատարիմ է լինում Աստված ինքը: Եթե մենք ուզում ենք այդ ուխտը կնքել Աստծո հետ, ոչ թե պարզապես ունենալ քաղաքացիական համատեղ կյանք, այլ ընտանիք կազմել՝ որպես Աստծուն միացած ընտանիք, ապա դիմում ենք եկեղեցական պսակադրության: Համատեղ ապրել կարող են շատերը, բայց ընտանիք լինել՝ այն մարդիկ, ովքեր իրենց մեջ պատկերացնում են պսակի սրբությունն ու այն պատասխանատվությունը, որը կրում են միմյանց հանդեպ:

«Տեր եմ» եւ «հնազանդ եմ» արտահայտությունները իշխանության կամ ենթարկվելու մասին չեն: Ամենքիս Տերը Աստված է, եւ ամենքս էլ Աստծո ծառաներն ենք: Այստեղ խոսքը պատասխանատվության մասին է՝ միմյանց խնամելու, հոգ տանելու եւ միմյանց կողքին լինելու: Պսակադրության վերջնանպատակը փրկությունն է՝ մեր ընտրյալի, մեր կողակցի հետ միասին: Մենք պետք է միմյանց օգնելով, թեւ ու թիկունք լինելով՝ միասին հասնենք փրկության:

- Իսկ ինչո՞ւ է այսօր շատերի համար ավելի հեշտ ընտրել միայն քաղաքացիական ամուսնությունը, իսկ հետո նաեւ ամուսնալուծվել: Եկեղեցին ո՞ր դեպքում է թույլ տալիս ամուսնալուծությունը:

- Պսակադրությունը սրբազան ուխտ է Աստծո առաջ: Այն, ինչ Աստված միացրեց, սուրբ է, մեկ եւ անբաժանելի: Այդ պատճառով պսակադրությունը պետք է ընկալել ոչ թե որպես պարզապես արարողություն, այլ որպես Աստծո առաջ ստանձնած մեծ պատասխանատվություն:

- Անդրադառնանք նաեւ ապաշխարության խորհրդին: Ինչպե՞ս կարող է մարդը հաղթահարել ամաչելու կամ վախենալու զգացումը եւ գալ եկեղեցի՝ իր մեղքերը խոստովանելու:

- Իրականում ապաշխարության գալը հեշտ չէ: Բարդ է, որովհետեւ բոլորս էլ մեղանչական ենք: Մեր մարդկային հայացքով հաճախ թվում է, թե մեր մեղքերը թաքնված են եւ ուրիշները չեն տեսնում: Սակայն պետք է գիտակցենք, որ Աստված ամենատես է: Երբ մենք խոստովանում ենք քահանային, մենք մեր մեղքերը չենք պատմում դատավորի: Այդ պատճառով խորհուրդս մեկն է՝ չկենտրոնանալ մեղքի ծանրության վրա, այլ կենտրոնանալ Աստծո ողորմության վրա: Մեծագույն եւ փոքրագույն մեղքն անգամ մեր մարդկային ուժերով չենք կարող մաքրել. դա անում ենք Աստծո ողորմությամբ: Ապաշխարությունը կարելի է համեմատել ձեռքերը լվանալու հետ: Մենք լվանում ենք մեր ձեռքերը, բայց դրանք կրկին կարող են կեղտոտվել, եւ նորից լվանում ենք: Նույն կերպ մեր հոգին մշտապես մաքրվելու կարիք ունի: Այդ պատճառով չպետք է ամաչել, չպետք է վախենալ կամ խուսափել: Այն, ինչ մեղանչել ենք, պետք է խոստովանենք Աստծո առաջ՝ քահանայի միջոցով, եւ ստանանք Աստծո ողորմությունը:

- Տե՛ր հայր, վերջում կուզենայի անդրադառնալ Ձեր հոգեւոր ծառայությանը: Եթե նոր եք ձեռնադրվել, ինչպե՞ս է անցել Ձեր հոգեւոր ճանապարհը, ի՞նչ փորձությունների եք հանդիպել, եւ ո՞րն եք համարում Ձեր խաչի ճանապարհի ամենադժվար հատվածը:

- Փորձությունները շատ են եղել: Սակայն երբ հետադարձ հայացք եմ նետում անցած ճանապարհին, քահանայական ձեռնադրությամբ ստացած այն բերկրանքը, որին արժանացանք, ամեն ինչ մոռացնել է տալիս: Ինչպես երեխայի ծնունդն է մոր համար մոռացնել տալիս ծննդաբերության ցավը, այնպես էլ քահանայական ծառայության շնորհը մոռացնել է տալիս բազմաթիվ դժվարություններ: Քրիստոնյայի կյանքում առհասարակ փորձությունն ու դժվարությունը անպակաս են: Որպես նորանշանակ քահանա՝ ինձ համար ամենադժվարն այն մարդկանց մխիթարելն է, ովքեր ցավի մեջ են: Հատկապես դժվար է հուղարկավորություն կատարել այն մարդկանց համար, որոնց անձնապես ճանաչել եմ: Երբ ապրումակցում ես եւ իսկապես զգում այն ցավը, որի միջով անցնում է հարազատ մարդը, դա, կարելի է ասել, խաչի ճանապարհին արված մի քայլ է:

- Ի՞նչ խորհուրդ կտաք այն ուրարակիրներին, կիսասարկավագներին եւ սարկավագներին, որոնք պատրաստվում են քահանա դառնալ: Ինչպիսի՞ն կցանկանայիք նրանց տեսնել եւ ինչպիսի՞ն երբեք չէիք ցանկանա տեսնել:

- Շատ աղոթել եւ կարդալ Սուրբ Գիրքը: Երբ աղոթում ենք, մենք հարցեր ենք ուղղում Աստծուն, իսկ երբ կարդում ենք Սուրբ Գիրքը, ստանում ենք այդ հարցերի պատասխանները: Աղոթքն ու Սուրբ Գրքի ընթերցանությունը այն մեթոդներն են, որոնցով սարկավագը կամ ուրարակիրը պատրաստվում է քահանայության: Բայց քահանա դառնալուց հետո եւս այդ ընթացքը շարունակվում է: Քահանան իր հնարավորություններն ընդլայնում է՝ այդ պատասխանները փոխանցելու իր համայնքին: Նա առավել մեծ գիտակցությամբ եւ պատասխանատվությամբ պետք է մոտենա թե՛ իր, թե՛ հավատացյալների կողմից հնչեցվող հարցերին եւ փորձի տալ լավագույն ու ճշմարիտ պատասխանը՝ այն, որը մեզ մատուցվում է Աստծո Սուրբ Գրքի եւ սրբազան ավանդության միջոցով:

- Եւ վերջում՝ ինչո՞ւ ընտրել խաչը, եթե կա ավելի հեշտ ճանապարհ:

- Ընտրել խաչը նշանակում է ընտրել հաղթանակը: Եթե որեւէ մեկին՝ աշխարհիկ թե հոգեւոր հարցում, հարցնենք՝ պարտությո՞ւն, թե՞ հաղթանակ ընտրել, բոլորը դեպի հաղթանակի ճանապարհը կգնան: Խաչը հաղթության ճանապարհն է, որովհետեւ Քրիստոս անցավ այդ ճանապարհով եւ հաղթեց՝ մեզ եւս պատգամելով հետեւել Իր ընթացքին:

Ընտրելով խաչի ճանապարհը՝ մենք մերժում ենք պարտվելը եւ ընտրում ենք հաղթությունը: Իսկ դեպի հաղթանակ տանող ճանապարհը միշտ չէ, որ հեշտ է, բայց այն միշտ փառավոր է եւ այդ հաղթանակը մեզ բերում է բերկրանք ու երջանկություն:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՊՈՒՏԻՆԸ ԿՈՉ Է ԱՐԵԼ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ ՄԱԿ-ի ներուժը դեռ ամբողջությամբ բացահայտված չէ, եւ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել կազմակերպության գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար:

Այս մասին Պուտինը հայտարարել է Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) գագաթնաժողովի ընթացքում՝ «ՇՀԿ+» ձեւաչափով հանդիպմանը: Նրա խոսքով՝ անհրաժեշտ է ընդլայնել ՄԱԿ-ի մարմինների, այդ թվում՝ Անվտանգության խորհրդի ներկայացվածությունը՝ ներգրավելով Գլոբալ Հարավի եւ Արեւելքի երկրներին: Պուտինը նաեւ նշել է, որ կազմակերպությունը պետք է հարմարվի համաշխարհային քաղաքականության եւ տնտեսության մեջ տեղի ունեցող հիմնարար փոփոխություններին:

ՌԴ նախագահի խոսքով՝ ՄԱԿ-ը պետք է շարունակի մնալ տարբեր երկրների շահերի համաձայնեցման գլխավոր մեխանիզմը: «ՄԱԿ-ի համախմբող եւ կառուցողական գործունեությունը մեծ պահանջարկ ունի: ՄԱԿ-ի կանոնադրությունը պետք է շարունակի մնալ միջազգային իրավունքի առանցքային աղբյուրը»,- ասել է Պուտինը: Նա ընդգծել է, որ աշխարհում չկա մեկ այլ կազմակերպություն, որն ունի տարբեր պետությունների շահերը համաձայնեցնելու նույնպիսի մեխանիզմ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՌՉԱԿԱԳԻՐ ԵՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ

Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) անդամ երկրների ղեկավարները կազմակերպության գագաթնաժողովի ընթացքում ստորագրել են Բիշքեկի հռչակագիրը: Այս մասին հայտնել է գագաթնաժողովի կազմկոմիտեն:

Հռչակագիրը նվիրված է ՇՀԿ-ի հիմնադրման 25-ամյակին:

Բիշքեկի հռչակագրից բացի՝ կողմերը ստորագրել են եւս 27 փաստաթուղթ: Դրանց թվում են ՇՀԿ անդամ երկրների անվտանգությանն ուղղված մարտահրավերների եւ սպառնալիքների դեմ պայքարի համընդհանուր կենտրոնի գործունեությունը կարգավորող կանոնակարգը, ինչպես նաեւ կազմակերպության անդամ երկրների նավահանգիստների եւ լոգիստիկ կենտրոնների զարգացման՝ 2026-2030 թվականների գործողությունների ծրագիրը:

Գագաթնաժողովի շրջանակում ստորագրվել է նաեւ միջուկային եւ միջուկային ֆիզիկական անվտանգության ոլորտում բազմակողմ գործընկերության ամրապնդման մասին հռչակագիր:

ՇՀԿ անդամ երկրների ղեկավարները նաեւ հայտարարություն են ընդունել էներգետիկ համակարգերի ոլորտում համագործակցության զարգացման վերաբերյալ:

Փաստաթղթերի թվում է նաեւ 2026-2030 թվականների համար ՇՀԿ-ի «Կանաչ տեխնոլոգիաների միջանցքի» ստեղծմանն ուղղված համագործակցության ծրագիրը:

Այսպիսով, գագաթնաժողովի արդյունքում ՇՀԿ անդամ երկրները պայմանավորվածություններ են ձեռք բերել անվտանգության, էներգետիկայի, լոգիստիկայի եւ կանաչ տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցությունը խորացնելու ուղղությամբ:

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ

«Ռուսաստանի երկաթուղիներ» («ՌԺԴ») ընկերությունը կատարում է Հայաստանի հետ կնքված կոնցեսիոն պայմանագրի բոլոր կետերը եւ պատրաստ է տարբեր հարցերի շուրջ շարունակել երկխոսությունը հայկական կողմի հետ: Այս մասին «Известия»-ին հայտնել է ընկերության ղեկավար Օլեգ Բելոզյորովը:

Նրա խոսքով՝ «Ռուսաստանի երկաթուղիներ»-ը մշտական կապի մեջ է Հայաստանի գործընկերների հետ եւ մեծ ուշադրությամբ է վերաբերվում պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը:

«Առաջանում են տարբեր հարցեր ու առաջարկներ, որոնք մենք համատեղ քննարկում ենք եւ որոշակի գործողություններ նախանշում: Հայ գործընկերները տարբեր հարցեր են ուղղում մեզ: Մենք բաց ենք երկխոսության համար»,- ասել է Բելոզյորովը:

Հիշեցնենք, որ ՌԺԴ-ի ղեկավարի հայտարարությունը հնչում է Հայաստանի երկաթուղային համակարգի կառավարման եւ դրա հետագա գործունեության շուրջ քննարկումների ֆոնին:

Ա. Վ.

ԻՐԱՎԻՃԱԿ

ԿՏԵՂԱՓՈԽԻ

Իրանը վերականգնել է նախկինում ԱՄՆ-ի հարվածների ենթարկված հրթիռների արտադրության բոլոր օբյեկտները, որոնք այժմ տեղակայված են անվտանգ վայրերում: Այս մասին հայտարարել է Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԻՀՊԿ) գլխավոր հրամանատարի խորհրդական Մոհամմադ Ռեզա Նաղդին: «Այս պատերազմում Իրանի առավելությունն այն է, որ ամբողջ սպառազինությունն արտադրվում է երկրի ներսում: Բոլոր օբյեկտները վերականգնվել են հնարավորինս անվտանգ վայրերում, եւ այժմ աշխատում են ժամանակակից առաջադատար տեխնոլոգիաների կիրառմամբ՝ ապահովելով արտադրության ավելի մեծ ծավալներ»,- ասել է նա լիբանանյան Al-Mayadeen հեռուստաալիքին տված հարցազրույցում: Նաղդին նշել է, որ նախկին որոշ ձեռնարկություններ խոցելի էին, քանի որ դրանց կոորդինատներն ու գտնվելու վայրերը հայտնի էին, սակայն Իրանը հաշվի է առել նախկին սխալները: Օգոստոսի 12-ին ԻՀՊԿ գլխավոր հրամանատարի խորհրդականը հայտարարել էր, որ Թեհրանի հրթիռների արտադրության ծավալները գերազանցում են հակառակորդին հարվածելու նպատակով դրանց կիրառման ծավալներին: Նա ընդգծել էր, որ Իրանը կշարունակի հրթիռներ արտադրել, նույնիսկ եթե «այս պատերազմը տարիներ շարունակվի»:

ԱՐՁԱԳԱՆՔԵԼ ԵՆ

ՌԴ տրանսպորտի նախարար Անդրեյ Նիկիտինը հայտարարել է, որ Մոսկվան շարունակում է կատարել իր պարտավորությունները Երեւանի հետ՝ անտեսելով Հայաստանի արձագանքները, գրում է Լուրեր.com-ը: Այս հայտարարությունը արվել է այն ֆոնին, որ Նիկոլ Փաշինյանը առաջարկել է ՀԿԵ-ի կոնցեսիան (կնքված 2008 թ., 30 տարով) վաճառել երրորդ կողմի, ինչը ՌԴ-ը մեկնաբանել է որպես «էմոցիաներ»: Մոսկվան շարունակում է աշխատել Երեւանի հետ՝ կատարելով իր բոլոր պարտավորությունները: Այս մասին հայտարարել է ՌԴ տրանսպորտի նախարար Անդրեյ Նիկիտինը: «Նրանք ոչ մի բանից ֆորմալ կերպով չեն հրաժարվում: Նրանք անընդհատ ինչ-որ բան հայտարարում են, բայց դրա հետ մեկտեղ ոչ մի հրաժարում՝ մենք աշխատում ենք, ինչպես աշխատել ենք»,- ասել է Անդրեյ Նիկիտինը՝ ՌԴ-ի հետ երկաթուղային փոխադրումների գծով գործընկերությունից ՀՀ-ի հրաժարվելու հնարավորության մասին հարցին պատասխանելով: Նիկիտինի խոսքով՝ բոլոր պայմանները գրված են գործող կոնցեսիոն համաձայնագրում: Հարավկովկասյան երկաթուղին (ՀԿԵ) Հայաստանի երկաթուղային տրանսպորտի համակարգը կառավարում է կոնցեսիոն համաձայնագրի հիման վրա, որը կնքվել է Հայաստանի եւ Ռուսական երկաթուղիների միջեւ 2008 թվականին: Այն ստորագրվել է 30 տարով՝ եւս 10 տարով երկարաձգելու իրավունքով: Ավելի վաղ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտնել էր, որ Երեւանը Մոսկվային առաջարկում է հանրապետությունում երկաթուղիների կառավարման կոնցեսիան վաճառել երրորդ կողմի: Երեւանի առաջարկներից Ռուսաստանի հրաժարվելու դեպքում Հայաստանի հնարավոր գործողությունների մասին հարցին վարչապետը պատասխանել է, որ նման սցենար հնարավոր չէ:

ԻՆՉ ԵՆ ՔՆՆԱՐԿԵԼ

ԱՎԻՆՅԱՆԸ ՁԻՋԵԼ Է, ԲԱՅՑ ՊԱՅՄԱՆՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երեկ Շենգավիթ վարչական շրջանում փակ հանդիպում է տեղի ունեցել այն ընտանիքների հետ, որոնց տները Երեւանի քաղաքապետարանը նախատեսում էր քանդել: Հանդիպմանը ներկա են եղել նաեւ քաղաքապետարանի եւ սոցիալական ոլորտի պատասխանատու կառույցների ներկայացուցիչները:

«Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ հանդիպման ընթացքում բնակիչներին փոխանցվել է, որ Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը որոշել է նրանց մի քանի օր ժամանակ տրամադրել՝ բնակարանային եւ աշխատանքի հարցերը լուծելու համար:

Մասնավորապես, սոցիալական ոլորտի պատասխանատու կառույցների ներկայացուցիչները պետք է մինչեւ երկուշաբթի փորձեն բնակարանային տարբերակներ գտնել ընտանիքների համար եւ նրանց ներկայացնել հնարավոր տեղափոխության պայմանները: Քաղաքապետարանն էլ իր հերթին պատրաստակամություն է հայտնել աջակցելու երկու կանանց աշխատանքի տեղավորման հարցում՝ Երեւանի բժշկական կազմակերպություններից մեկում:

Սակայն այս ամենը, ըստ մեր աղբյուրների, ունի հստակ նախապայմաններ:

Բնակիչներին փոխանցվել է, որ այս ընթացքում տարածքում այլեւս որեւէ նոր գործունեություն չպետք է իրականացվի, այդ թվում՝ շինանյութ չպետք է թափվի: Պայմանավորվածությունների խախտման դեպքում քաղաքապետարանը չի պատրաստվում նոր ժամկետներ տրամադրել եւ կարող է անցնել տների քանդման աշխատանքներին:

Այսինքն՝ քաղաքապետարանի կողմից տների քանդման որոշումը չի չեղարկվել, այլ ընդամենը ժամանակավորապես հետաձգվել է՝ ընտանիքներին աշխատանքով եւ կացարանով ապահովելու հնարավորություն ստեղծելու համար:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մինչեւ երկուշաբթի պետք է համապատասխան կառույցները վերջնական պատասխան ունենան՝ արդյոք հնարավոր է ընտանիքներին ապահովել բնակության վայրով եւ աշխատանքով: Դրանից հետո քաղաքապետարանը կվերադառնա տների ապամոնտաժման հարցին:

Փաստորեն, Շենգավիթի բնակիչներին տրվել է մի քանի օր՝ իրենց հետագա բնակության եւ աշխատանքի հարցերը կարգավորելու համար: Իսկ եթե պայմանավորվածությունները չկատարվեն, քաղաքապետարանը պատրաստվում է անցնել ավելի կոշտ գործողությունների:

Հիշեցնենք, որ Շենգավիթում տների քանդման գործընթացը վերջին օրերին լարված իրավիճակ էր ստեղծել: Բնակիչները դիմադրում էին քաղաքապետարանի գործողություններին՝ պնդելով, որ իրենց համար այլընտրանքային բնակարանային եւ սոցիալական լուծումներ չեն առաջարկվել:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՄՆ ՍԵՆԱՏՈՐԻ ՀԵՏ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Բիշքեկում հանդիպում է ունեցել ԱՄՆ սենատոր Սթիվ Դեյնզի գլխավորած պատվիրակության հետ: Քրուցակիցները կարեւորել են Հայաստան-ԱՄՆ ռազմավարական գործընկերության շարունակական զարգացումը տարբեր ուղղություններով:

Անդրադարձ է կատարվել տարածաշրջանային գործընթացներին եւ տեղի ունեցող զարգացումներին: Ընդգծվել է TRIPP նախագծի դերը հաղորդակցությունների ապաշրջափակման եւ զարգացման գործում: Այդ համատեքստում, մտքեր են փոխանակվել նախագծի իրականացման ընթացքի եւ առաջիկա ծրագրերի շուրջ:

ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարել է, որ Հայաստանը եւ Ադրբեջանը աշխատում են երկկողմ առեւտրի ծավալների ավելացման եւ նոր ցամաքային տրանսպորտային հաղորդակցությունների ստեղծման ուղղությամբ:

Ալիեւն այս մասին ասել է Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) «+» ձեւաչափով հանդիպման ընթացքում:

Նրա խոսքով՝ ավելի քան մեկ տարի առաջ Ադրբեջանն ու Հայաստանը վերջ են տվել ավելի քան 30 տարի տեւած հակամարտությանը՝ խաղաղության համաձայնագրի տեքստը նախագծելու միջոցով:

Ալիեւը նշել է, որ Ադրբեջանն արդեն նավթամթերք է մատակարարում Հայաստան եւ ապահովում երրորդ երկրների բեռների տարանցումը:

«Հայաստանի հետ համատեղ մենք աշխատում ենք փոխադարձ առեւտրի ծավալի ավելացման, դրա անվանացանկի ընդլայնման եւ նոր ցամաքային տրանսպորտային հաղորդակցությունների ստեղծման ուղղությամբ», - ասել է Ադրբեջանի նախագահը:

ԲԻՇՔԵԿՈՒՄ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը սեպտեմբերի 1-ին Բիշքեկում հանդիպել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ:

Ադրբեջանական «Ազերթաջի» փոխանցմամբ՝ հանդիպման ընթացքում կողմերն ընդգծել են, որ ադրբեջանա-թուրքական երկկողմ հարաբերությունները հիմնված են եղբայրության եւ ռազմավարական դաշնակցային հարաբերությունների վրա: Կողմերը գոհունակություն են հայտնել տարբեր ուղղություններով կապերի հետագա ընդլայնման առնչությամբ:

Հանդիպման ընթացքում ընդգծվել է նաեւ «մեկ ազգ, երկու պետություն» սկզբունքը՝ նշելով, որ երկու երկրները միմյանց կողքին են ինչպես լավ, այնպես էլ դժվար ժամանակներում:

Ալիեւն ու Էրդողանը մտքեր են փոխանակել տարածաշրջանային խաղաղության եւ կայունության հետագա ամրապնդման վերաբերյալ:

Երկու երկրների ղեկավարները քննարկել են նաեւ դաշնակցային հարաբերությունների զարգացման հեռանկարները, տարածաշրջանային օրակարգը եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ԽՈՒԶԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼ

Գագիկ Խաչատրյանի նկատմամբ ձերբակալման որոշում է կայացվել. խուզարկություններ՝ նրա, որդու բնակարաններում եւ 21 ընկերություններում:

ՀՀ քննչական կոմիտեն հայտնել է, որ ՊԵԿ նախկին նախագահ Գագիկ Խաչատրյանի վերաբերյալ կայացվել է ձերբակալման որոշում: Որոշումը կայացվել է առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու եւ առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում:

ՔԿ-ի փոխանցմամբ՝ վարույթի շրջանակում իրականացվել են անհետաձգելի քննչական եւ վարութային գործողություններ: Մասնավորապես, խուզարկություններ են կատարվել Գագիկ Խաչատրյանի եւ նրա որդու բնակարաններում:

Սակայն իրավապահների գործողությունները միայն բնակարաններով չեն սահմանափակվել: Քննչական գործողություններ են իրականացվել նաեւ Խաչատրյանների հետ փոխկապակցված շուրջ 21 ընկերությունների գրասենյակներում եւ մասնաճյուղերում:

Այս հանգամանքը ուշագրավ է, քանի որ խոսքը միայն մեկ անձի նկատմամբ իրականացվող իրավական գործընթացի մասին չէ. քննության շրջանակը փաստացի հասնում է նաեւ նրա ընտանիքի եւ նրանց հետ կապ ունեցող բիզնես կառույցների:

ՔԿ-ն առայժմ չի մանրամասնել, թե կոնկրետ ինչ ընկերությունների մասին է խոսքը, ինչ գումարների չափի մասին է քննությունը, ինչպես նաեւ ինչ ապացույցներ են ձեռք բերվել իրականացված խուզարկությունների արդյունքում:

Գագիկ Խաչատրյանը նախկինում եւս հայտնվել է իրավապահների ուշադրության կենտրոնում: Նրա դեմ հարուցված քրեական գործերով տարիներ շարունակ քննվել են պաշտոնեական լիազորությունների չարաշահման, ապօրինի հարստացման եւ այլ ենթադրյալ հանցագործությունների վերաբերյալ դրվագներ:

Այս նոր վարույթի շրջանակում, սակայն, իրավապահները շեշտադրում են հատկապես առանձնապես խոշոր չափերով կաշառքի ստացման եւ փողերի լվացման ենթադրյալ դեպքերը:

Կարեւոր է ընդգծել, որ ձերբակալման որոշման առկայությունը դեռեւս չի նշանակում մեղավորության հաստատում: Գագիկ Խաչատրյանի եւ մյուս հնարավոր ներգրավված անձանց մեղավորությունը կարող է հաստատվել միայն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԿԱՊԱՐԱԿՆՔՎԵԼ ԵՆ

ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմինը իրականացրել է վերահսկողական գործողություններ «ՕՌԱՆԺ ՕԻԼ» ՍՊԸ-ին պատկանող լցակայանների ցանցում: Տեսչական մարմնից հայտնում են՝ հայտնաբերվել են բազմաթիվ խախտումներ, այդ թվում՝

-դիզելային վառելիքի եւ հեղուկացված ածխաջրածնային գազի ցուցանիշները չեն համապատասխանել անվտանգության պահանջներին, բացակայել են

-չափանոթները,

-արագ արձագանքման QR կոդերը եւ մակնշումները:

«Միաժամանակ արձանագրվել են նաեւ չափագիտական կանոնների եւ նորմերի խախտումներ: Վերահսկողության արդյունքում կապարակնքվել են ցանցին պատկանող՝ 10 հասցեներում գործող լցակայաններ:Հայտնաբերված խախտումների հիմքով տնտեսվարող սուբյեկտը օրենքով սահմանված կարգով կենթարկվի վարչական պատասխանատվության: Նախատեսվում է շուրջ 9 միլիոն դրամ տուգանք»,-նշված է հաղորդագրության մեջ:

ԱՊՕՐԻՆԻ

Օգոստոսի 25-ին Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ սահմանափակ պատասխանատվությամբ մի ընկերություն Արմավիրի մարզի Աղավնատուն բնակավայրի գյուղատնտեսական նշանակության տարածքում, առանց պայմանագրի եւ խախտելով ընդերքօգտագործման պահանջները, արդյունահանում եւ իրացնում է տուֆ քար: Քրեական ոստիկանների ստուգողական այցի ժամանակ հիշյալ տարածքում քարհատման աշխատանքներ էր կատարում ռելսագնաց հաստոց, կային մասամբ եւ ամբողջությամբ հանքաքար բարձած բեռնատարներ, որոնք տեղափոխվել են պահպանվող հատուկ տարածք: Ըստ նախնական տվյալի՝ ապօրինի արդյունահանման հետեւանքով պետությանն ու համայնքին պատճառվել է երկու միլիոն 400 հազար դրամի վնաս: Կազմված փաստաթղթերը ներկայացվելեն Վաղարշապատի քննչական բաժին: Հանգամանքները պարզվում են:

ԲԱՑԱՀԱՅՏԵՑԻՆ

Օգոստոսի 11-ին ստացվել էր հաղորդում, որ նախորդ երկու օրվա ընթացքում պատուհանը հրել-բացելով մտել են Արարատ քաղաքում գտնվող փոստային ծառայություններից մեկի գրասենյակ եւ աշխատասեղանի դարակից գողացել գումար: Համայնքային ոստիկանության Արարատի բաժնի ծառայողների օպերատիվ միջոցառումների արդյունքում ստացվում է հավաստի տեղեկություն, որ գողությունը կատարել է Արարատ գյուղի բնակիչ 58-ամյա մի տղամարդ: Նույն օրը նա հայտնաբերվում է Արարատ գյուղում, ձերբակալվում եւ տեղափոխվում բաժին, որտեղ խոստովանում է արարքը: Տղամարդն ու կազմված փաստաթղթերը ներկայացվել են Վեդիի քննչական բաժին: Հանգամանքները պարզվում են:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՀԱՆՋ ԿԱ

Նախարարի հրաժարականի հանրային պահանջ կա, քաղաքական որոշում է պետք: Այս մասին Հակակոռուպցիոն դատարանի մոտ լրագրողների հետ զրույցում հայտարարել է ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանը՝ խոսելով բանակում ինքնասպանությունների ու սպանությունների մասին:

«Բանակում ինքնասպանությունների պարագայում գտնում եմ, որ պետք է մի քիչ ավելի զգույշ լինել եւ ավելի շատ աշխատել, այլ ոչ թե պաշտոնանկությունների միջոցով լուծումներ տալ»,- ասել է նա:

Հարցին՝ իրավաչափ է համարո՞ւմ, որ այդ դեպքերի հետեւանքով հենց նախարարը պիտի հրաժարական տա, Տոնոյանը պատասխանեց.

«Նախարարի հրաժարականը վարչապետի ու նախարարի դաշտում է գտնվում: Եթե իրենք գտնում են, որ քաղաքական առումով դրա անհրաժեշտությունը կա՝որոշումը կկայացնեն, ուրեմն չեն տեսնում քաղաքական այդպիսի որոշում: Հանրային պահանջը կա, բայց հանրային պահանջն էլ այնպես չէ, որ պետք է համեմատական անել այլոց աշխատանքի հետ, այլոց վիճակագրության հետ: Իմ պաշտոնավարման ժամանակ երեւի մի երեք անգամ հանրային դաշտում անընդհատ պաշտոնանկ եմ եղել, ցույցեր են եղել, ամեն ինչ եղել է, դա քաղաքական որոշման խնդիր է»,- նշել է նախկին նախարարը:

ԵՐԵՔ ԱՆՁ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Օգոստոսի 31-ին Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողներն իրացրել են մաքսանենգ ճանապարհով ներկրված թմրանյութ ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու վերաբերյալ ստացված օպերատիվ տեղեկությունը:

Համագործակցելով մայրաքաղաքի պարեկների հետ՝ քրեական ոստիկանները Երեւանի Ռուբինյանց փողոցում ձերբակալել են երեք երիտասարդի եւ մեքենայով հանդերձ տեղափոխել Համայնքային ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին:

«Չանգան» մակնիշի մեքենան տեղափոխվել է պահպանվող հատուկ տարածք եւ կնիքվել:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված խուզարկությամբ մեքենայում հայտնաբերվել է մոտ 10 կիլոգրամ մարիխուանայի նմանվող զանգված: Նախաքննությունը շարունակվում է:

ԿԱՏԱՐՎՈՒՄ ԵՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ-30, /Մ-4/-Ճամբարակ-/Հ-7/ ճանապարհի 19-րդ եւ 51-րդ կմ հատվածներում գտնվող սողանքային տեղամասերում (Այգուտի եւ Աղբերքի հատվածներ) կատարվում են ճանապարհամերձ հողաշերտի բեռնաթափման, ճանապարհի անցանելիության ապահովման միջոցառումներ:

Շինարարությունը մեկնարկել է 2025 թվականին: Նախորդ տարի աշխատանքներ են կատարվել նշված ճանապարհի 51-րդ կմ-ում՝ Աղբերքի տեղամասում, իսկ ընթացիկ տարում՝ 19-րդ կմ-ում՝ Այգուտի տեղամասում: Կապալառուի կողմից կատարվել են հողային աշխատանքներ՝ հանույթ, լիցք, հարթեցում: Տեղադրվել են ջրահեռացման խողովակներ, սողանքային տեղամասերը վերականգնվել են կոպճային ծածկով:

Շինաշխատանքները կատարվում են ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ԵՆ

Թուրքիայի ներքին գործերի նախարար Մուստաֆա Չիֆթչին Վրաստանի ներքին գործերի նախարար Սուլխան Թամազավիլիի հրավերով մեկնել է Վրաստան:

Թբիլիսիի միջազգային օդանավակայանում թուրք նախարարին եւ նրա պատվիրակությանը դիմավորել են Սուլխան Թամազավիլին, Թբիլիսիում Թուրքիայի դեսպան Մուստաֆա Թյուրքեր Արընը եւ այլ պաշտոնյաներ:

Նախարարները նախատեսում են անցկացնել ընդլայնված կազմով հանդիպում: Այցի շրջանակում նախատեսվում է նաեւ Թուրքիայի եւ Վրաստանի ոստիկանական ակադեմիաների միջեւ փոխըմբռնման հուշագրի ստորագրում:

Հանդիպումից հետո նախարարները հանդես կգան համատեղ մամուլի ասուլիսով, գրում է Լուրեր.com-ը:

● *Օգոստոսի 24-ից 31-ը մայրաքաղաք Երեւանում պարեկները հայտնաբերել են ոչ սթափ 157 վարորդ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՆՏԱՌՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՀԱՏԵԼ

Օգոստոսի 29-ին միջպետական ավտոճանապարհից Իջեւան համայնքի Սեւքար տանող խաչմերուկում Սեւքարից իջնող «ԶԻԼ» մակնիշի՝ փայտով բեռնված բեռնատարը հարվածել է միջպետական ավտոճանապարհով ընթացող մարդատար ավտոմեքենային, որի մեջ Բաղանիս գյուղի բնակիչներ էին: Մարդատարի ուղեւորը՝ բաղանիսցի 22-ամյա երիտասարդը, ծանր վնասվածքներով տեղափոխվել է Երեւանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ, ուր գտնվում է կոմայի մեջ: Իջեւանի եւ Սեւքարի անտառտնտեսությունների անտառները շարունակում են հատել: 2019թ. ամռանը, երբ փայտի բիզնեսով զբաղվողները Իջեւանում բողոքի գործողություններ էին անում, Ն. Փաշինյանը պահանջել է կոշտ միջոցներ ձեռնարկել: Արթուր Վանեցյանը հայտնել է. «Նիկոլ Փաշինյանը ինձ ու Օսիպյանին ասաց՝ես ուզում եմ տեսնել արյան գետեր, սատկացրեք բոլորին»: Փաշինյանին հիմա չե՞ն հետաքրքրում Իջեւանի անտառների մեծ հատումները: Անտառների պահպանության գործում առկա է համակարգային բաց: 2024թ. հունվարի 1-ին գործում է Ծրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայությունը: Սակայն էկոպարեկային ծառայությունը անտառներ չի մտնում, այլ նոր ավտոմեքենաներով, սահմանված ուղերթերով շուրջօրա հսկողություն է իրականացնում անտառամերձ տարածքների ճանապարհներին: Այսինքն՝ անտառի որոշակի հատվածների պահպանությունը էկոպարեկների գործառույթը չէ: Դա նաեւ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի անտառտնտեսությունների աշխատակազմի գործառույթը չէ: Այն տարածքներում, որտեղ էկոպարեկային ծառայության պաշտոնյաների եւ անտառտնտեսության տնօրինության միջեւ գործում են գործընկերային սերտ հարաբերություններ, այդտեղ անտառի պահպանությունը հաջողված է: Սակայն շատ տեղերում նման գործընկերային հարաբերություններ, աշխատանքային համագործակցություն չկա, ինչից մեծապես տուժում է անտառների պահպանության գործը: Այժմ Տավուշում՝ անտառներում անասնապահությամբ զբաղվողները քչացել են, մեծ թվով խոշոր եղջերավոր անասուններ պահողներն անասունները արածեցնում են ոչ թե անտառներում, այլ հեռավոր սարեր-ամառանոցներում: Անասունների քիչ արածեցման հետեւանքով անտառների շատ հատվածներ պատվել են մեծ, չորացած խոտերով, թփերով, մացառներով, դարձել դժվարանցանելի: Անտառները տարածվելով՝ որոշ դեպքերում մտել են անտառամերձ գոտում գտնվող, համայնքների բնակիչներին սեփականության իրավունքով պատկանող խոտհարքներ, դրանք պատել բազում տնկիներով, խոտհարքները դարձրել անպիտան: Այս խնդիրները պետք է արձանագրվեն, դրանց լուծման ուղիները որոշվեն: Սակայն ո՞վ պետք է անի, եթե «Հայանտառ» ՊՈԱԿ ղեկավարության մեջ անտառագետ, բնագետ կադրերը շատ քիչ են, այդ կազմակերպությունը անցած 15 ամսում չի կարողացել կամ չի ցանկացել այդ ՊՈԱԿ-ի ինտերնետային կայքի վերազինումն ավարտել, կայքը վերագործարկել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ ՈՒՆԻ

18.5 ՄԼՆ ԴՐԱՄ ԵԿԱՄՈՒՏ, 2 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ

ArmLur.am-ը շարունակում է ուսումնասիրել եւ հանրությանը ներկայացնել Սահմանադրական դատարանի դատավորների գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրերը: Այս անգամ ուսումնասիրել ենք ՍԴ դատավոր Դավիթ Խաչատուրյանի հայտարարագրերը:

Ո՞վ է Դավիթ Խաչատուրյանը

Դավիթ Խաչատուրյանը 1997 թվականին գերազանցության դիպլոմով ավարտել է Երեւանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը, նույն թվականին ընդունվել է ասպիրանտուրա, իսկ 2000 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ դատավորների անկախության թեմայով:

2000-2005 թվականներին աշխատել է ՀՀ Վճռաբեկ դատարանում եւ Դատարանների նախագահների խորհրդում: 2003-2006 թվականներին ղեկավարել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող եւ ՄԱԿ-ի կողմից իրականացվող տարածաշրջանային ծրագրի՝ Հայաստանում իրավական օժանդակության ուղղությունը:

2006-2013 թվականներին աշխատել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատանը եւ ԱՄՆ Արդարադատության դեպարտամենտում: Հետագայում եղել է ՀՀ արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր եւ դասախոս, ինչպես նաեւ Եվրոպայի խորհրդի եւ ԵՄ տարբեր ծրագրերի փորձագետ:

2016-2021 թվականներին եղել է ՀՀ փաստաբանների պալատի անդամ: 2021 թվականի հունվարի 22-ին Ազգային ժողովի կողմից ընտրվել է Բարձրագույն դատական խորհրդի անդամ:

2023 թվականի հոկտեմբերի 30-ին նշանակվել է Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր, իսկ 2024 թվականի մայիսի 21-ին Ազգային ժողովի կողմից ընտրվել է Սահմանադրական դատարանի դատավոր: Պաշտոնը ստանձնել է 2024 թվականի մայիսի 22-ին:

ԲԴԽ անդամ եղած ժամանակ՝ երկու անշարժ գույք եւ 2004 թվականի Lexus

2021 թվականի հայտարարագրի համաձայն՝ Դավիթ Խաչատուրյանը տարվա սկզբում ունեցել է Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գտնվող անհատական բնակելի տուն՝ հողամասով եւ տնտեսական շինություններով: Տունը նրա միանձնյա սեփականությունն է եւ ձեռք է բերվել 2010 թվականի հուլիսի 19-ին:

Սակայն հենց 2021 թվականին նրա ունեցվածքում ավելացել է եւս մեկ անշարժ գույք: Դեկտեմբերի 1-ին նա Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում ձեռք է բերել բնակարան՝ 22 մլն 685 հազար 760 դրամ հայտարարագրված արժեքով: Այսպիսով, 2021 թվականի վերջում ԲԴԽ անդամ Դավիթ Խաչատուրյանն արդեն հայտարարագրել էր երկու անշարժ գույք՝ բնակելի տուն եւ բնակարան:

Տրանսպորտային միջոցներից նա ունեցել է 2004 թվականի արտադրության Lexus մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք էր բերել 2014 թվականի ապրիլի 20-ին: 2021 թվականին մեքենայի փոփոխություն չի եղել:

2021 թվականին Խաչատուրյանի հայտարարագրված եկամուտը կազմել է 9 մլն 762 հազար 762 դրամ: Ամբողջ գումարը աշխատանքի վարձատրություն եւ դրան հավասարեցված վճարումներ են, իսկ եկամուտ վճարողը Դատական դեպարտամենտն է:

Տարվա սկզբում նրա երեք բանկային հաշիվներում եղել է 1 մլն 393 հազար 614 դրամ, 19 հազար 29 եվրո եւ 117 հազար 800 դրամ: Տարեվերջին այդ գումարները համապատասխանաբար կազմել են 293 հազար 600 դրամ, 15 հազար 17 եվրո եւ 721 հազար 418 դրամ:

2021 թվականի վերջում Խաչատուրյանն ունեցել է նաեւ 19 մլն 600 հազար դրամի վարկային պարտավորություն, որը կապված է ձեռք բերած բնակարանի հետ:

Բացի այդ, հայտարարագրում նշված է 2 մլն 50 հազար դրամի մեկանգամյա ծախս:

ՍԴ դատավոր դառնալուց հետո՝նոր մեքենա եւ ավելի քան 18.5 մլն դրամ եկամուտ

Արդեն Սահմանադրական դատարանի դատավորի պաշտոնում՝ 2025 թվականի հայտարարագրի համաձայն, Դավիթ Խաչատուրյանի անշարժ գույքի պատկերը պահպանվել է. նա ունեցել է նույն երկու անշարժ գույքը՝ Երեւանում գտնվող անհատական բնակելի տունը եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գտնվող բնակարանը:

2025 թվականին նոր անշարժ գույք չի ձեռք բերել եւ որեւէ գույք չի օտարել:

Փոխվել է, սակայն, նրա տրանսպորտային միջոցների կազմը: 2025 թվականի հունիսի 20-ին նա 6 մլն 890 հազար դրամով ձեռք է բերել 2024 թվականի արտադրության BYD մակնիշի մարդատար ավտոմեքենա: Միաժամանակ նրա սեփականության տակ մնացել է 2004 թվականի Lexus-ը:

Այսինքն՝ ՍԴ դատավոր դառնալուց հետո Խաչատուրյանի հայտարարագրում արդեն երկու ավտոմեքենա է առկա:

Բանկային հաշիվներին՝ տարբեր արժույթներով գումարներ, նաեւ 3 մլն դրամ կանխիկ

2025 թվականի սկզբում Դավիթ Խաչատուրյանի տարբեր բանկային հաշիվներում առկա են եղել 125 հազար 600 դրամ, 10 հազար 791 եվրո, 3 հազար 85 դրամ եւ 1 հազար 154 դրամ:

Տարվա վերջում այդ հաշիվների մնացորդները կազմել են համապատասխանաբար 100 հազար 597 դրամ, 3 հազար 731.46 եվրո, 85 հազար 468.12 դրամ եւ 5 հազար 1.6 դրամ:

Մեկ այլ բանկային հաշվին տարվա սկզբում գումար չի եղել, իսկ տարեվերջին առկա է եղել 1 մլն 479 հազար 144 դրամ:

Բացի բանկային միջոցներից՝ 2025 թվականի վերջում դատավորը հայտարարագրել է 3 մլն դրամ կանխիկ գումար, մինչդեռ տարվա սկզբում կանխիկ գումարը կազմել էր 1 մլն դրամ:

Եկամուտը՝ 18.5 մլն դրամ, վարկերը՝ ավելի քան 24.5 մլն դրամ

2025 թվականին Սահմանադրական դատարանի դատավոր Դավիթ Խաչատուրյանը աշխատանքի վարձատրության եւ դրան հավասարեցված այլ վճարումների տեսքով ստացել է 18 մլն 590 հազար 809 դրամ:

Միաժամանակ տարվա վերջում նրա երկու վարկային պարտավորությունների մայր գումարի մնացորդը միասին կազմել է 24 մլն 531 հազար 982.9 դրամ: Դրանցից մեկի մնացորդը եղել է 6 մլն 371 հազար 156.7 դրամ, մյուսինը՝ 18 մլն 160 հազար 826.2 դրամ: Երկրորդ վարկի շրջանակում որպես հիփոթեքի առարկա նշված է բնակարան բազմաբնակարան շենքում:

Ի՞նչ է փոխվել տարիների ընթացքում

Դավիթ Խաչատուրյանի 2021 եւ 2025 թվականների հայտարարագրերի համադրությունից պարզ է դառնում, որ նրա անշարժ գույքի մասով էական փոփոխություն չի արձանագրվել. երկու ժամանակահատվածներում էլ հայտարարագրված են նույն բնակելի տունն ու բնակարանը:

Փոխվել է ավտոմեքենաների կազմը. 2021 թվականին նա հայտարարագրել էր միայն 2004 թվականի Lexus, իսկ 2025-ին այդ մեքենային ավելացել է 2024 թվականի BYD-ը՝ 6 մլն 890 հազար դրամ արժեքով:

Միաժամանակ աճել է նաեւ պաշտոնական եկամուտը. 2021 թվականին այն կազմել էր 9.76 մլն դրամ, իսկ 2025 թվականին՝ արդեն 18.59 մլն դրամ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՈՒՂԵՐՁ Է ՀՂԵԼ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Գիտելիքի օրվա առթիվ. «Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով շնորհավորում ենք կրթօջախների սաներին ու մանկավարժներին, կրթության բոլոր մշակներին եւ հողում Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը:

Կրթությունը լուսավորում է մարդկային միտքն ու հոգին, կերտում ու ձեւավորում անձին՝ արդի ժամանակներին եւ պահանջներին համահունչ գիտելիքներով ծառայություն բերելու կյանքի առաջընթացին ու բարօրությանը: Կրթությունը անհատի առջեւ բացում է աստվածճանաչողության ճանապարհը, միաժամանակ ազգային ու հոգեւոր անանց արժեքներով սնում ազգի արժանավոր զավակների, դաստիարակում գիտակից ու պատասխանատու քաղաքացիներ:

Մաղթում ենք ուժ ու կորով կրթության գործի բոլոր նվիրյալներին՝ իրենց պատասխանատու եւ գովարժան առաքելությամբ սաների սրտերում ամրապնդելու ուսման հանդեպ նախանձախնդրությունը, զորացնելու նրանց ազգասեր ու հայրենանվեր ոգին: Ձեզ, սիրելի աշակերտներ եւ ուսանողներ, մաղթում ենք եռանդ ու ջանասիրություն, որպեսզի գիտելիքների բարի արդյունքներով ազնիվ նպաստ բերեք մեր երկրին ու ժողովրդին եւ ուրախություն պատճառեք ձեր ընտանիքներին: «Իմաստությունը պիտի հաճելի լինի քո ականջին, սիրտդ պիտի հաճույք գտնի գիտության մեջ»,- խրատում է Սուրբ Գիրքը (Առակներ 2.2):

Թող Աստված Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո խաղաղության մեջ պահպանի մեր հայրենիքը եւ առատապես օրհնի ու զորացյալ պահի աշխարհասփյուռ մեր ժողովրդին այսօր եւ միշտ. ամեն»:

● *Հայաստանի Հանրապետության մարզերում օգոստոսի 24-ից 31-ը պարեկները հայտնաբերել են ոչ սթափ 275 վարորդ:*

ԱՇԽԱՐՀ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՄՆԱԼ ԹՈՒՆԵԼՆԵՐՈՒՄ

Նեպալում Տիբեթի հետ սահմանին տեղի ունեցած ավերիչ ջրհեղեղների եւ սելավների հետեւանքով զոհերի թիվը գերազանցել է 1000-ը: Երկրի աղետների կառավարման գործակալության տվյալներով՝ ավելի քան 3900 մարդ շարունակում է անհետ կորած համարվել, այդ թվում՝ ավելի քան 600 աշխատակիցներ, որոնք ենթադրաբար արգելափակված են Տրիշուլի գետի երկայնքով գտնվող հիդրոէլեկտրակայանների՝ցեխով լցված թունելներում: Նեպալի վարչապետ Բալենդրա Շահի խոսքով՝ հիդրոէլեկտրակայանների տարածքներից արդեն 279 մարդ է փրկվել: Փրկարարական աշխատանքներին ներգրավված են Նեպալի եւ Չինաստանի զինվորականները, ինչպես նաեւ մասնագետներ Հնդկաստանից, Հարավային Կորեայից եւ Ավստրալիայից: Բանակի ստորաբաժանումները որոշ հատվածներում պայթուցիկներ են օգտագործում՝ լեռնալանջերը բացելու եւ թունելներին հասնելու համար: Փրկարարական աշխատանքները բարդանում են այն պատճառով, որ ջրհեղեղները ամբողջությամբ փոխել են տարածքի տեսքը: Նեպալի հիդրոէներգետիկ ենթակառուցվածքը մեծ վնասներ է կրել: Իշխանությունների տվյալներով՝ ջրհեղեղների հետեւանքով վնասվել է առնվազն 11 հիդրոէներգետիկ նախագիծ, որոնք արդեն ավարտված էին կամ գտնվում էին կառուցման փուլում: Դրանցից յուրաքանչյուրում աշխատում են հարյուրավոր մարդիկ, այդ թվում՝տեղի եւ արտագնա աշխատողներ, ինչպես նաեւ ինժեներներ: Անհետ կորածների հարազատները դժգոհում են փրկարարական գործողությունների դանդաղ ընթացքից՝ նշելով, որ օդի մատակարարումը թունելներ պետք է ավելի վաղ սկսվեր: Միաժամանակ որոշ ընտանիքներ դեռ հույս ունեն, որ թունելներում գտնվող մարդիկ կարող են ողջ լինել, քանի որ որոշ հատվածներում առկա են թթվածնի համակարգեր:

Նեպալի վարչապետը հայտարարել է, որ փրկարարական աշխատանքներն ակտիվացվել են՝ընդգծելով, որ տեղի ունեցածը «սովորական» աղետ չէ: Նրա խոսքով՝ կլիմայի փոփոխության պայմաններում Հիմալայան տարածաշրջանում նման աղետների վտանգը մեծանում է, եւ միջազգային հանրությունը պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնի տարածաշրջանի կլիմայական աղետներին: Միաժամանակ երկրում լուրջ խնդիր է առաջացել հայտնաբերված զոհերի նույնականացման հարցում: Նեպալի առողջապահության նախարարության տվյալներով՝ հայտնաբերված շուրջ 900 մարմինների միայն 4 տոկոսն է մինչ այժմ նույնականացվել: Տիբեթի հատվածում Չինաստանի պետական լրատվամիջոցները հայտնում են 16 զոհի եւ 546 անհետ կորածի մասին: Ջրհեղեղների հետեւանքների մասին տեղեկությունները - Չինաստանում խիստ վերահսկվում են, իսկ իշխանությունները վարչական պատասխանատվության են ենթարկել այն անձանց, որոնք համացանցում տարածել են զոհերի իրական թիվը պաշտոնապես հայտարարվածից ավելի բարձր լինելու մասին ենթադրություններ: Նեպալի իշխանություններն էլ կարգադրել են հեռացնել ջրհեղեղների վերաբերյալ այն առցանց հրապարակումները, որոնք, իրենց գնահատմամբ, ապատեղեկատվություն են պարունակում:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵԼՈՒՅԹ

ԱՌԱՋԻԿԱ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԿՍԿՍՎԵՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Բիշքեկում մասնակցել է Շանհայի համագործակցության կազմակերպության ՇՀԿ+ ձեւաչափի հանդիպմանը: Նախ տեղի է ունեցել հանդիպման մասնակիցների դիմավորման, այնուհետեւ համատեղ տեսալուսանկարահանման արարողությունը:

Վարչապետ Փաշինյանն իր ելույթում, մասնավորապես, նշել է.

«Հարգելի՛ պարոն նախագահող Սադիր Ժապարով,

Միացյալ ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղար, հարգելի՛ պարոն Գուտերեշ, Ձե՛րդ գերազանցություններ,

Հարգելի՛ գործընկերներ,

Նախեւառաջ, ցանկանում եմ Ղրղզստանի նախագահ՝ հարգելի Սադիր Ժապարովին շնորհավորել նորակառույց «Բիշքեկ Արենայում» Քոչվորական 6-րդ համաշխարհային խաղերի տպավորիչ բացման, ինչպես նաեւ Շանհայի համագործակցության կազմակերպությունում Ղրղզստանի Հանրապետության արդյունավետ նախագահության առիթով, ինչպես նաեւ շնորհակալություն հայտնել ջերմ հյուրընկալության եւ այս գագաթնաժողովի հրաշալի կազմակերպման համար:

Ցանկանում եմ նաեւ շնորհավորել բոլորին՝ ՇՀԿ հիմնադրման հոբելյանական 25-ամյակի առթիվ:

Հարգելի՛ գործընկերներ,

Այսօրվա մեր քննարկման թեման է. ««ՄԱԿ-ը որպես արդար աշխարհակարգի առանցքային տարր. ՇՀԿ+ պետությունների ներդրումը բազմաբեւեռ աշխարհի ձեւավորման գործում»:

Իմ տպավորությամբ՝ միջազգային հանրության շրջանում մեծ ըմբռնում կա, որ աշխարհը պետք է լինի բազմաբեւեռ եւ դա է հավասարակշռությունը, ասել է թե կայունությունն ու խաղաղությունն ապահովելու շատ թե քիչ հուսալի տարբերակը:

Հայաստանի նման փոքր պետությունն ինչպե՞ս կարող է ներդրում ունենալ բազմաբեւեռ աշխարհի կայացմանը: Այս հարցին մենք գործնական պատասխան ենք տալիս, ըստ էության, բազմաբեւեռ արտաքին քաղաքականություն վարելով, որն անվանում ենք հավասարակշռված եւ հավասարակշռման արտաքին քաղաքականություն:

Այդ քաղաքականության իմաստը հետեւյալն է. երբ աշխարհաքաղաքական որեւէ բեւեռի ձգողականությունն այն աստիճանի է ծանրանում, որ կարող է քայքայել մեր անկախությունը, մենք ակտիվացնում ենք այս իրադրության համար բավարար ձգողականություն ունեցող մեկ այլ բեւեռի հետ մեր հարաբերությունները՝ պահպանելու համար մեր հավասարակշռությունն ինքնիշխանության եւ անկախության բարդություններով լեցուն ճանապարհին:

Նման քաղաքականության հիմնական նպատակն ինքնիշխանությունը եւ անկախությունը պահպանելը եւ ուժեղացնելն է: Եվ այս ռազմավարությունները մշակելիս եկել ենք եզրակացության, որ հնարավոր չէ անկախություն եւ ինքնիշխանություն ունենալ՝ապրելով կոնֆլիկտի պայմաններում, եւ բազմաբեւեռությունն այս իմաստով պետք է արտահայտվի առաջին հերթին այն տարածաշրջանում, որտեղ ապրում ես:

Այս է պատճառը, որ խորացնելով մեր բարեկամական հարաբերությունները հարեւան Իրանի եւ Վրաստանի հետ, մենք գնում ենք մյուս երկու հարեւանների՝Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ միջպետական հարաբերություններ կառուցելու ճանապարհով, եւ սա, իհարկե, առավել առարկայական է դառնում նախորդ տարվա օգոստոսի 8-ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի աջակցությամբ եւ մասնակցությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաստատված խաղաղության շնորհիվ:

Հիմա մենք Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ աշխատում ենք մեր միջպետական հաղորդակցությունները բացելու ուղղությամբ, այդ թվում՝ TRIPP նախագծի իրագործմամբ, որի գործնականացման աշխատանքները գետնի վրա կսկսվեն առաջիկա ամիսներին:

Սա տրանսպորտային նոր հնարավորություններ կբացի ոչ միայն արեւելքից արեւմուտք՝ այսինքն Կասպից ծովից մինչեւ Միջերկրական ծով, այլեւ հարավից հյուսիս՝ Պարսից ծոցը կապելով Սեւ ծովին: Այնպես որ, նախագծի իրագործումից կշահեն տարածաշրջանի բոլոր երկրները:

Վերադառնալով բազմաբեւեռ քաղաքականությանը՝ նշեմ, որ Հայաստանը վերջին տարիներին ռազմավարական հարաբերություններ է հաստատել Վրաստանի, Չինաստանի, Ղազախստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Նիդեռլանդների, Գերմանիայի, Լյուքսեմբուրգի, Միացյալ Թագավորության, Բուլղարիայի, Խորվաթիայի, Լիտվայի, Եվրոպական Միության հետ:

Հնդկաստանի եւ Իրանի հետ մեր հարաբերությունները փաստացի ռազմավարական բնույթ ունեն, հիմա մենք աշխատում ենք դրա փաստաթղթային ձեւակերպման վրա:

Այսօր ես հանդիպում կունենամ Ռուսաստանի Դաշնության հարգելի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ՝քննարկելու մեր հարաբերությունների հետագա զարգացման ռազմավարությունը:

Հարգելի՛ գործընկերներ,

Հայաստանի Հանրապետությունը կիսում է աշխարհի բազմաբեւեռության տեսլականը:

Ընդգծելով Միացյալ ազգերի կազմակերպության առանցքային դերը բազմաբեւեռ աշխարհի կառուցման գործում՝ ուզում եմ տեղեկացնել, որ ս/թ հոկտեմբերին՝ ՄԱԿ-ի հովանու ներքո, Հայաստանում տեղի է ունենալու Կենսաբազմազանության COP 17 համաժողովը, եւ բոլորիդ հրավիրում եմ մասնակցել աշխարհի բազմաբեւեռությունն ընդգծող այդ կարեւոր միջոցառմանը:

Շնորհակալ եմ ուշադրության համար եւ Շանհայի համագործակցության կազմակերպության նախագահությունը ստանձնող Պակիստանին հաջողություններ եմ մաղթում այդ պատասխանատու առաքելության մեջ»:

ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՆ ՍՊԱՍՈՒՄ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Արմավիրի մարզի Երասխահունի Մարտիկ Գեւորգյանի անվան վերակառուցված դպրոցում սեպտեմբերի 1-ին դասեր չեն անցկացվել:

Դպրոցի աշակերտները երեկ դպրոց չեն գնացել, եւ ուսումնական տարվա մեկնարկը փաստացի հետաձգվել է մեկ օրով:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ պատճառը ոչ թե ուսումնական գործընթացին առնչվող որեւէ խնդիրն է, այլ դպրոցի բացման արարողությունը վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ անցկացնելու ցանկությունը: Դպրոցը վերջերս է վերակառուցվել, եւ որոշվել է, որ այն պետք է պաշտոնապես բացի հենց վարչապետը:

Սակայն Փաշինյանը Հայաստանում չէ. նա գտնվում է Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում, որտեղ նախատեսված են նրա մասնակցությամբ եւ հանդիպումներով պայմանավորված միջոցառումներ: Արդյունքում, վարչապետի մասնակցությամբ դպրոցի բացումը սեպտեմբերի 1-ին չի կայացել, իսկ աշակերտներին, ըստ մեր տեղեկությունների, հորդորել են այսօր դպրոց չգնալ եւ ուսումնական գործընթացը սկսել սեպտեմբերի 2-ից:

Այսինքն՝ երեխաների համար ուսումնական տարվա առաջին օրը փաստացի հետաձգվել է մեկ օրով՝ վարչապետի մասնակցությամբ դպրոցի բացման արարողությանը համապատասխանեցնելու համար:

Հատկանշական է, որ սեպտեմբերի 1-ը Հայաստանում դպրոցականների համար ոչ միայն ուսումնական տարվա մեկնարկն է, այլեւ խորհրդանշական օր, երբ հազարավոր երեխաներ առաջին անգամ են մտնում դպրոց կամ վերադառնում դպրոցական առօրյային: Եւ այս դեպքում հարց է առաջանում՝ արդյո՞ք դպրոցի պաշտոնական բացման արարողությունն իսկապես պետք է առաջնային լիներ երեխաների ուսումնական գործընթացի նկատմամբ:

Եթե դպրոցի շենքը պատրաստ էր ընդունելու աշակերտներին, ապա ինչո՞ւ դասերը չկազմակերպվեցին սեպտեմբերի 1-ից, իսկ բացման պաշտոնական միջոցառումն անցկացվեր մեկ այլ օր:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՍԿՍԱԾ $30-ԻՑ

ԱՅՍ ԱՇՆԱՆ «ԱՄԵՆԱԹՐԵՆԴԱՅԻՆ» ԿՈՇԻԿՆԵՐԸ

Եթե ամռանը բալետկաներն էին ամենուր, աղա աշնանը դրանց ավելի փակ ու էլեգանտ տարբերակն է դասրասվում դառնալ սեզոնի գլխավոր կոշիկային թրենդներից մեկը:

Քեթի Հոլմսը, Քենդալ Ջենները եւ Սառա Փիջոնը արդեն նկատվել են glove flats՝բարձր վամպով բալետկաներ կրելիս: Դրանք պահպանել են դասական բալետկաների հարմարավետ ու նուրբ ուրվագիծը, սակայն ավելի բարձր վերնամասի շնորհիվ ոտքն ավելի շատ են ծածկում եւ հատկապես հարմար են զով աշնանային եղանակի համար:

Այս մոդելները հեշտությամբ կարելի է համադրել ջինսերի, տաբատների, լեգինսների եւ նույնիսկ աշնանային զգեստների հետ: Իսկ ամենահետաքրքիրն այն է, որ նմանատիպ տարբերակներ կարելի է գտնել ընդամենը $30-ից սկսած:

Madewell Greta Glove Flats - $88

Քեթի Հոլմսի վերջերս կրած զույգին շատ նման են Madewell-ի Greta glove flats-ը: Դրանք պատրաստված են փափուկ, «կարագի պես» հարթ կաշվից եւ ունեն դասական կլոր քիթ:

Բարձր վամպով դիզայնը ամբողջությամբ ծածկում է մատները, ինչի շնորհիվ այս բալետկաները հարմար տարբերակ են աշնանային առօրյա կերպարների համար: Դրանք կարելի է կրել թե՛ ջինսի, թե՛ դասական տաբատի կամ լեգինսի հետ:

Frank Mully Pointed-Toe Knit Flats - $39

Եթե նախընտրում եք ավելի սուր քիթ եւ նրբագեղ ուրվագիծ, ուշադրության արժանի են Frank Mully-ի այս բալետկաները:

Դրանք պատրաստված են թեթեւ եւ ճկուն տրիկոտաժե նյութից, իսկ ներբանի փրփուրե միջնաշերտը նախատեսված է ավելի հարմարավետ քայլքի համար: Գնորդներից մեկը դրանք անվանել է «զգեստապահարանի հիմնական բաղադրիչ»՝ նշելով, որ կարողացել է ժամերով քայլել քաղաքում եւ իրեն հարմարավետ զգալ:

Բացի այդ, մոդելը կարելի է լվանալ լվացքի մեքենայով:

Voleece Criss-Cross Strap Mary Jane Flats - $45

Եթե սիրում եք Mary Jane-ների ոճը, կարող եք միանգամից երկու թրենդ համադրել:

Voleece-ի այս մոդելն ունի խաչաձեւ էլաստիկ գոտիներ, որոնք կոշիկին տալիս են ավելի շքեղ եւ թանկարժեք տեսք: Միեւնույն ժամանակ դիզայնը չի զիջում հարմարավետությանը:

Գնորդներից մեկը մոդելը նկարագրել է որպես դիզայներական կոշիկների «հիանալի այլընտրանք»՝ ընդգծելով, որ այն հարմարավետ է եղել հենց առաջին օրվանից եւ հատուկ «կոտրվելու» շրջան չի պահանջել:

Kissasa Square-Toe Ballet Flats - $43

Քառակուսի քիթը նույնպես շարունակում է մնալ աշնանային կոշիկների ակտուալ դետալներից մեկը: Kissasa-ի այս բալետկաները դասական եւ ժամանակակից ոճի միջեւ լավ հավասարակշռություն են ստեղծում: Դրանք հատկապես հետաքրքիր ընտրություն են նրանց համար, ովքեր ցանկանում են ավանդական բալետկաներից մի փոքր տարբերվող, բայց դեռեւս հեշտ համադրվող մոդել:

Dream Pairs Pointed-Toe Mary Jane Flats - $30

Ընդամենը $30-ով կարելի է ընտրել նաեւ Dream Pairs-ի սուր քթով Mary Jane մոդելը:

Այս տարբերակը միավորում է միանգամից երկու հայտնի ուղղություն՝ glove flat-ի ավելի փակ ուրվագիծն ու Mary Jane-ի գոտին: Արդյունքում ստացվում է նրբագեղ, բայց առօրյա կոշիկ, որը կարելի է կրել գրեթե ամեն ինչի հետ:

Cushionaire Siesta Modern Lattice Ballet Flats - $40

Եթե սիրում եք 2000-ականների սկզբի նորաձեւությունը, այս տարբերակը կարող է հատկապես հետաքրքրել:

Cushionaire-ի Siesta Modern Lattice ballet flats-ը վերադառնում են վաղ 2000-ականների տրամադրությամբ՝ ժամանակակից մեկնաբանությամբ: Ցանցանման դետալները կոշիկին տալիս են ավելի հետաքրքիր եւ աչքի ընկնող տեսք:

Franco Sarto Odilia Mary Jane Flats - $85-ից

Նրանց համար, ովքեր պատրաստ են մի փոքր ավելի շատ ներդնել, կա Franco Sarto-ի Odilia Mary Jane մոդելը:

Այն ավելի բարձրակարգ տեսք ունեցող տարբերակ է եւ այժմ վաճառվում է նախկին $130-ի փոխարեն՝ սկսած $85-ից:

Vivaia Margot 3.0 Ballet Flats - $129

Իսկ եթե ցանկանում եք ընտրել այնպիսի բրենդ, որը սիրված է նաեւ հայտնի մարդկանց շրջանում, ուշադրություն դարձրեք Vivaia-ին:

Margot 3.0 ballet flats-ը կրել են Օփրան, Սելենա Գոմեսը եւ այլ հայտնի դեմքեր: $129 արժողությամբ այս տարբերակը ցուցակի ամենաթանկերից է, սակայն հենց իր շքեղ տեսքով է առանձնանում:

Ինչո՞ւ է glove flats-ը հարմար աշնանը

Glove flats-ի գլխավոր առավելությունն այն է, որ դրանք պահպանում են բալետկաների թեթեւությունն ու կանացի տեսքը, բայց ավելի շատ են ծածկում ոտքը: Բարձր վամպը հատկապես հարմար է այն օրերին, երբ ամառային բաց կոշիկների համար արդեն զով է, իսկ ծանր աշնանային կոշիկների համար՝ դեռ վաղ:

Եթե ցանկանում եք այս աշնանը թարմացնել զգեստապահարանը՝ առանց չափազանց համարձակ փոփոխությունների, glove flats-ը բավականին հեշտ տարբերակ են: Դրանք կարելի է համադրել ջինսի եւ պարզ շապիկի հետ՝ առօրյա կերպարի համար, կամ դասական տաբատի ու բլեյզերի հետ՝ ավելի հավաքված տեսք ստանալու համար:

Այսպիսով, Քեթի Հոլմսի, Քենդալ Ջենների եւ այլ աստղերի ընտրությունը հուշում է՝ բալետկաները չեն պատրաստվում հեռանալ, պարզապես աշնանը դրանք դառնում են ավելի փակ, նրբագեղ եւ գործնական:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՆԿԵՂԾԱՑԵԼ Է

Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանը խոսել է 2028 թվականի Եվրոպայի առաջնությանը որակավորվելու մեր ընտրանու հեռանկարների մասին, գրում է armsport-ը: Ռուսական «Чемпионат» պարբերականի թղթակցի հետ զրույցում հայ մասնագետն ընդգծել է, որ թիմն ունի մեծ ներուժ, սակայն նման խոշոր մրցաշարի ուղեգիր նվաճելու համար միայն մոտիվացիան բավարար չէ. «Մենք շատ ենք ուզում հայտնվել Եվրոպայի առաջնությունում, բայց միայն ցանկությունը քիչ է. հնարավորություններն այլ հարց են: Մենք ունենք երիտասարդ ու հեռանկարային թիմ, որին խոստումնալից ապագա է սպասվում: Ես հավատում եմ նրանց: Սակայն արդյո՞ք կհասցնենք կարճ ժամանակահատվածում նման աճ գրանցել: Առայժմ մեզ մի փոքր պակասում է փորձը, բայց վաղ թե ուշ Հայաստանի հավաքականի մոտ ամեն ինչ լավ է լինելու. պարզապես ժամանակ է հարկավոր»,- նշել է Մելիքյանը: Հիշեցնենք, որ Եվրո-2028-ի ընտրական փուլը կմեկնարկի 2027 թվականի մարտին եւ կավարտվի նոյեմբերին: Մայրցամաքային գլխավոր ստուգատեսի եզրափակիչ փուլում հանդես կգա 24 ազգային հավաքական:

ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

39-ամյա լեգենդար հարձակվող Լիոնել Մեսսին օգոստոսի 31-ին պաշտոնապես հայտարարեց Արգենտինայի ազգային հավաքականում իր փառահեղ ելույթներն ավարտելու մասին: Այս պատմական որոշմանն արձագանքել է նրա հարազատ ակումբը՝ կատալոնական «Բարսելոնան»՝ հուզիչ մեկնաբանություն թողնելով ֆուտբոլիստի սոցցանցային գրառման տակ: «Դու տվեցիր քո բոլոր ուժերը, խաղացիր մինչեւ վերջին շունչդ: Արգենտինան ու ողջ Բարսելոնան հպարտանում են այն մեծագույն ժառանգությամբ, որը դու թողնում ես»,- նշված է կատալոնական ակումբի մամուլի ծառայության տարածած հաղորդագրության մեջ:

Հիշեցնենք, որ արգենտինացի հանճարի վերջին հանդիպումն ազգային թիմի մարզաշապիկով դարձավ 2026 թվականի Աշխարհի առաջնության եզրափակիչը: Լարված դիմակայության լրացուցիչ ժամանակում արգենտինացիները նվազագույն հաշվով (0:1) զիջեցին Իսպանիայի ընտրանուն: «Ալբիսելեստեի» կազմում անցկացրած տարիների ընթացքում Մեսսին դարձել է բացարձակ ռեկորդակիր՝ մասնակցելով 207 հանդիպման եւ դառնալով 125 գոլի հեղինակ: Նա ազգային թիմի հետ նվաճել է միջազգային ասպարեզի բոլոր հնարավոր գլխավոր տիտղոսները՝ դառնալով 2022թ. Աշխարհի չեմպիոն, 2021 եւ 2024թթ. Ամերիկայի գավաթակիր, 2022թ. Ֆինալիսիմայի հաղթող եւ 2008թ. Օլիմպիական խաղերի չեմպիոն: Մեսսին «Բարսելոնայի» ակադեմիայի գլխավոր հպարտությունն է, ով առաջին թիմի գույները պաշտպանել է 2003-ից մինչեւ 2021 թվականը: «Բլաուգրանայի» հետ անցկացրած ոսկե տարիներին նա 10 անգամ հռչակվել է Իսպանիայի չեմպիոն, 4 անգամ բարձրացրել Չեմպիոնների լիգայի գավաթը, 7 անգամ հաղթել Իսպանիայի գավաթի խաղարկությունում, ինչպես նաեւ 3-ական անգամ նվաճել ՈՒԵՖԱ-ի Սուպերգավաթն ու Աշխարհի ակումբային առաջնության տիտղոսը:

«ՅՈՒՆԻՍՊՈՐՏԸ» ԴՈՒՐՍ ԵԿԱՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼ

Հայաստանի չեմպիոն եւ գավաթակիր «Յունիսպորտը» նվաճեց ֆուտզալի ՈՒԵՖԱ Չեմպիոնների լիգայի հիմնական փուլի ուղեգիրը՝ նախնական փուլում տանելով երեք անընդմեջ հաղթանակ:

Խմբային փուլի վերջին խաղում «Յունիսպորտը» 5:2 հաշվով առավելության հասավ Գերմանիայի չեմպիոն «Վայլիմդորֆի» նկատմամբ: Ռաֆիկ Մելիքյանն ու Պուտրուս Վասիլեւը դարձան դուբլի հեղինակ, եւս մեկ գոլ խփեց դարպասապահ Բեկբոլոտ Ակմատալիեւը: Վաստակելով առավելագույն 9 միավորը, «Յունիսպորտը» վստահորեն զբաղեցրեց E խմբի առաջին հորիզոնականը եւ կշարունակի պայքարը Չեմպիոնների լիգայի հիմնական փուլում: «Յունիսպորտ» ֆուտզալի ակումբը հիմնվել է Յունիբանկի աջակցությամբ: Ակումբի հետ համագործակցությունը Բանկի՝հայկական սպորտի զարգացմանն ու միջազգային հարթակում դրա առաջխաղացմանը նպաստող նախաձեռնություններին ուղղված հետեւողական աշխատանքի մի մասն է: «Յունիսպորտի»՝ Չեմպիոնների լիգայի հիմնական փուլ դուրս գալը նոր էջ է բաում թիմի համար եւ հնարավորություն ընձեռում հանդես գալ եվրոպական ֆուտզալի բարձր մակարդակում: «Ուրախ ենք տեսնել, թե ինչպես են «Յունիսպորտի» ստեղծման հիմքում դրված հավակնությունները վերածվում կոնկրետ մարզական արդյունքների: Չեմպիոնների լիգայում երեք հաղթանակ ու հիմնական փուլ դուրս գալը վկայում են թիմի մեծ ներուժի մասին եւ ցույց տալիս, թե ինչ արդյունքների կարելի է հասնել պրոֆեսիոնալ աշխատանքի ու ընդհանուր նպատակին ձգտելու շնորհիվ: Յունիբանկի համար կարեւոր է աջակցել այնպիսի նախագծերի, որոնք հնարավորություն են տալիս արժանապատվորեն ներկայացնել Հայաստանը միջազգային հարթակում: Թիմին մաղթում ենք վստահ խաղ եւ նոր հաղթանակներ», - նշել են Յունիբանկում: Հիմնական փուլի հանդիպումները կանցկացվեն հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 1-ը Լյուքսեմբուրգում: «Յունիսպորտի» մրցակիցները կլինեն Լիտվայի «Կաունո Ժալգիրիսը», Լյուքսեմբուրգի «Դիֆերդանժը» եւ Հունաստանի «Դուկասը»:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում սեպտեմբերի 3-ին՝ժամը 19:00-ին, կկայանա «Ռոմեո եւ Ջուլիետ» բալետը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞r լիցենզիայի կամ թույլտվության համար դիմել ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն:

Գագիկ Վարդանյան, 48 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Շրջակա միջավայրի նախարարություն կարելի է դիմել հետեւյալ Լիցենզիաների համար՝

ԵԱՏՄ շրջանակներում երրորդ երկրների հետ առեւտրի դեպքում սահմանափակումների ենթակա ապրանքների ներմուծման եւ արտահանման դեպքում,

Վտանգավոր թափոնների գործածության գործունեության դեպքում,

Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի պրեկուրսորներ չհամարվող թունավոր նյութերի ԵԱՏՄ տարածք ներմուծման եւ ԵԱՏՄ տարածքից արտահանման դեպքում,

Օզոնային շերտը քայքայող նյութերի եւ հիդրոֆտորածխածինների ԵԱՏՄ տարածք ներմուծման եւ ԵԱՏՄ տարածքից արտահանման դեպքում,

Վայրի կենդանիների եւ առանձին վայրի բույսերի ԵԱՏՄ տարածքով տեղափոխման եւ ԵԱՏՄ տարածքից արտահանման դեպքում,

Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ եւ անհետացող վայրի կենդանիների եւ բույսերի տեսակների ու դրանց մասերի եւ (կամ) ածանցյալների ԵԱՏՄ տարածքից արտահանման դեպքում:

Թույլտվություններ՝

Ջրօգտագործման դեպքում,

«Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առեւտրի մասին» կոնվենցիայով (ՍԻԹԵՍ) կարգավորման ենթակա վայրի կենդանիները եւ բույսերը, դրանց մասերն ու ածանցյալները Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու եւ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու դեպքում,

Բուսաբանական հավաքածուներ եւ առանձին նմուշներ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու եւ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու դեպքում

-Հայաստանի Հանրապետության տարածքից վայրի կենդանիներ եւ կենդանաբանական հավաքածուներ ու առանձին նմուշներ արտահանելու եւ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու դեպքում,

Անազատ պայմաններում բուծված թառափազգիների տեսակների նմուշների արտահանման դեպքում:

Նախարարության կողմից լիցենզիաների եւ թույլտվությունների տրամադրման, պայմանագրերի կնքման ընթացակարգերը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը եւ այլ մանրամասները հասանելի են շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Այն դեպքում, երբ հաճախորդը, որ բանկում ունի հաշիվ ԱՄՆ դոլարով, ստանում է 20 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումար եվրոյով, ինչպե՞ս պետք է լրացվի հաշվետվական ձեւը:

Սուրեն Գալստյան, 55 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն դեպքում, երբ ԱՄՆ դոլարով հաշիվ ունեցող հաճախորդի անունով ստացվում է 20 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումար եվրոյով, իսկ հաճախորդը տվյալ բանկում չունի եվրոյով հաշիվ, եւ ստացված գումարը հաճախորդի եւ բանկի միջեւ առկա համաձայնության, պայմանագրի հիման վրա կամ գործարար շրջանառության սովորույթի համաձայն փոխարկվելու է, ֆինանսական դիտարկումների կենտրոն պետք է ներկայացվի երկու հաշվետվություն: Առաջին 7 հաշվետվությունը պետք է ներկայացվի բանկային հաշվով ստացման վերաբերյալ՝ «Բանկային հաշվի համարը կամ եզակի հղման համարը» դաշտում նշելով այն տարանցիկ հաշվի համարը, որին մուտքագրվել է ստացված եվրոն: Երկրորդ հաշվետվությունը պետք է ներկայացվի արտարժույթի փոխարկման վերաբերյալ՝ «Բանկային հաշվի համարը կամ եզակի հղման համարը» դաշտում նշելով այն դոլարային հաշվի համարը, որին փոխարկումից հետո մուտքագրվում է գումարը:

ՀՀ ԿԲ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Օգոստոսի 30-ին տեղացած հորդառատ անձրեւի պատճառով թե՛ մայրաքաղաքում, թե՛ մարզերում վարորդների ու հետիոտների համար ստեղծվել էին անհարմարություններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 7 + 17 + 19 + 24
	Կոտայքի լեռներ	+ 7 + 10 + 19 + 23
	Կոտայքի նախալեռներ	+ 13 + 15 + 24 + 27
	Գեղարքունիք	+ 7 + 11 + 17 + 21
	Լոռի	+ 9 + 13 + 19 + 23
	Տավուշ	+ 9 + 13 + 20 + 23
	Արագածոտնի լեռներ	+ 7 + 10 + 19 + 23
	Արագածոտնի նախալեռներ	+ 12 + 16 + 23 + 28

	Արարատ	+ 14 + 17 + 26 + 29
	Արմավիր	+ 14+ 17 + 27 + 30
	Վայոց ձորի լեռներ	+ 7 + 10 + 16 + 20
	Վայոց ձորի նախալեռներ	+ 14 + 18 + 27 + 30
	Սյունիքի լեռներ	+ 7 + 10 + 13 + 16
	Սյունիքի նախալեռներ	+ 9 + 12 + 17 + 21
	Սյունիքի հովիտներ	+ 17 + 21 + 24 + 28
	Երեւան	+ 15 + 17 + 27 + 29

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **01.09.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*